ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-026-2023
16.03.2023թ.

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պ. 48/17, հեռ.՝ +37494099477/

Հարգելի պարոն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 83-րդ չափաբաժնի մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00031526, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պ. 48/17, հեռ.՝ +37494099477, էլեկտրոնային հասցե՝ haykazunq22@mail.ru), որի հետ 05.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-7 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 13.01.2023թ-ին կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացուցիցների հաստատման համաձայնագիր:

Այգու կողմից, նշյալ համաձայնագիրը հաստատելուց հետո, սահմանված կարգով՝ 03/02/2022թ. , 11/02/2023թ. , 15/02/2023թ., 17/02/2023թ., 24/02/2023թ., 27/02/2023թ. հայտերով և 15/02/2023թ. ծանուցմամբ՝ Ձեզ է ներկայացրել մատակարարման պատվերներ-հայտեր՝ սահմանված և հաստատված ձևաչափով: Ներկայացված պատվեր-հայտերի շրջանակում՝ Ձեր կողմից միայն մեկ անգամ՝ 17/02/2023թ. մատակարարվել է մեկ պարկ՝ 25 կգ քաշով համակցված կեր, որը չի համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ հանդիսացել է գրանուլաները եղել են չափերով 4-5մմ, սակայն պետք է լինեին 10-15մմ չափերով, մատակարարված ապրանքը հանդիսացել է կեր՝ քաշով փոքր կենդանիների համար, սակայն պայմանագրով նախատեսված բնութագրով սահմանված է եղել, որ կերը պետք է համապատասխանի 50կգ և ավել կշռող կենդանիների համար, միաժամանակ՝ բնութագրով նախատեսված էր Cu-10մգ-ի պարունակություն, որը ներկայացվածի պարկում բացակայում էր: Այլ մատակարարումներ չեն եղել՝ առ այսօր:

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «Հայկազունք» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ Այգու կարիքների համար կերերի ձեռքբերումն ունի կենսական նշանակություն, իսկ մատակարարումների նման ժամանակավրեպ, ինչպես նաև ոչ պատշաճ (տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքից տարբերվող ապրանքի մատակարարումը) իրականացումը կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, «Հայկազունք» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-7 ծածկագրով պայմանագիրը 83-րդ չափաբաժնի մասով միակողմանի մասնակի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. մարտի 29-ը ներառյալ, ապահովել 83-րդ չափաբաժնի մասով ներկայացված տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման մասով՝ 1,134,000.00 (մեկ միլիոն մեկ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 756,000.00 (յոթ հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամի չափով, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ»
ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԷԴՄՈՆԴ ՂԱԶԱՐՅԱՆ